«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 1

30 ապրիլի 2019 թվականի

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2018 թվականի գործունեության արդյունքների և 2019 թվականի խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2018 թվականի գործունեության արդյունքները և 2019 թվականի խնդիրները»** հարցը (զեկուցող՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնն ավարտին է հասցրել 2017 թվականին «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով «ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարության և երկարաժամկետ զարգացման ծրագրի փաստաթղթի ստեղծման» աշխատանքները: Պայմանագրով նախատեսված և մշակված փաստաթուղթն առաքվել է «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Փաստաթղթի մշակման նպատակով իրականացված հետազոտության արդյունքները հրապարակվել են համալսարանի կայքէջի կենտրոնին հատկացված հատվածում: Կենտրոնն իրականացրել է 4 հետազոտական ծրագիր՝ հրապարակելով 2 ծավալուն հետազոտության զեկույց: Շարունակվել են կենտրոնի կողմից համալսարանի կայքում կենտրոնին հատկացված հատվածում 4 խորագրերով ամենամսյա ու եռամսյակային վիճակագրական-վերլուծական հաշվետվությունների և հոդվածների հրապարակման աշխատանքները: Կենտրոնի աշխատակիցները և ներգրավված փորձագետները 2018 թվականին իրականացրել են 70 նմանատիպ հրապարակումներ, որից 33-ը՝ վերլուծականներ, 31-ը՝ վերլուծական-վիճակագրական տեղեկագրեր, 3-ը՝ ոլորտային ամփոփագրեր, 3-ը՝ ընտրված ոլորտների առկա վիճակի ուսումնասիրության արդյունքներն արտացոլող վերլուծական զեկույց: Մինչ 7-րդ գումարման ՀՀ ԱԺ գործունեության սկիզբը, կենտրոնը շարունակել է ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի հետ ինստիտուցիոնալ համագործակցությունը: Հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակներում կենտրոնը հրապարակել է հանձնաժողովի կողմից կազմակերպված խորհրդարանական լսումների ամփոփագիրը, փորձաքննության է ենթարկել մի շարք օրենսդրական նախաձեռնություններ:

Իրականացված հետազոտությունների արդյունքների հրապարակայնացման ուղղությամբ կենտրոնը շարունակել է իրականացնել հավելյալ հասցեական

աշխատանքներ: Մասնավորապես՝ հետազոտական թեմաների կատարման ընթացքում ձեռք բերված արդյունքների հիման վրա մշակված վերլուծական ակնարկները զետեղվել են համալսարանի կայքում և կենտրոնի սոցիալական տարբեր ցանցերում վարած էջերում: Կենտրոնի հետազոտությունների արդյունքներն առաքվել են կենտրոնի գործընկերներին և հետազոտությունների արդյունքների շահառուներին: Կենտրոնի աշխատակիցներն ակտիվ են եղել ՀԼՄ-ների հետ կատարվող աշխատանքներում, ակտիվ մասնակցություն են ունեցել տարբեր բանավիճային ակումբների կազմակերպած քննարկումներին:

Կենտրոնը շարունակել է արտաքին շահակիցներին հաշվետվողականության ավանդույթը: Մշակել և համալսարանի կայքում երեք լեզուներով զետեղել է 2018 թվականի գործունեության արդյունքներն ու հրապարակումների համառոտագրերն արտացոլող հաշվետվությունը:

2018 թվականին կենտրոնի 3 հետազոտական ծրագրերում ներգրավված է եղել 9 հաստիքային աշխատակից (2-ը՝ վարչական, 7-ը՝ հետազոտող): Նույն ժամանակահատվածում ձևավորված 4 հետազոտական խմբերում իբրև կատարող փորձագետներ ներգրավված են եղել բուհի 14 դասախոս, 2 վարչական աշխատակից, 34 ուսանող և ասպիրանտ:

Հաշվետու տարում կենտրոնի անձնակազմը հրատարակել է 26 գիտական հոդված (10-ը՝ միջազգային գիտական ամսագրերում), 3 համալիր հետազոտության հաշվետվություն, 1 մենագրություն, 1 ուսումնական ձեռնարկ: Կենտրոնի հաստիքային աշխատակիցները զեկուցումներ են ունեցել 8 գիտաժողովներում (3-ը՝ արտերկրում), մասնակցել են 2 միջազգային աշխատաժողովի, ՀՀ ԱԺ-ում կազմակերպված 7 աշխատանքային քննարկման, հրավիրվել են 4 հանրային դասախոսություն կարդալու, մասնակցել են «Էրազմուս+»-ի 4 փոխանակման ծրագրի:

2018 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների ծրագրին աջակցության շրջանակներում կենտրոնը, համալսարանի տարբեր ստորաբաժանումների հետ համագործակցելով, բուհում իրականացրել է ուսանողների, դասախոսների, ուսումնաօժանդակ անձնակազմի և ստորաբաժանումների աշխատակիցների սոցիոլոգիական և ֆոկուս խմբերով հարցումներ, ներգրավված է եղել համալսարանի որակի ապահովման գործընթացներին և ռազմավարական զարգացման ծրագրի մշակման աշխատանքներին:

2018 թվականին կենտրոնը համագործակցության հուշագիր է ստորագրել ՀՀ վարչապետի աշխատակազմի անվտանգության խորհրդի գրասենյակի հետ՝ ճանաչվելով գրասենյակի պաշտոնական գործընկեր:

Հանրային քաղաքականության բնագավառում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի մասնագիտացումը, պետական մարմինների հետ ինստիտուցիոնալ հարաբերությունների հաստատումը և սոցիալական հարթակներում ակտիվությունը նպաստել են, որ կենտրոնը 2018 թվականին բարելավի ԱՄՆ Փենսիլվանիայի

համալսարանի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի ուղեղային կենտրոնների հեղինակավոր համաշխարհային վարկանշային զեկույցում «Կենտրոնական Ասիայի լավագույն ուղեղային կենտրոններ» բաժնի շուրջ 200 համանման հաստատությունների շարքում զբաղեցրած դիրքը (61-րդ տեղ) և ներառվի աշխարհի լավագույն համալսարանական ուղեղային կենտրոնների վարկանիշ (94-րդ տեղ): Հայաստանի համալսարանական ուղեղային կենտրոններից տարածաշրջանի երկրների լավագույնների շարքում ընդգրկվել են միայն Հայաստանի ամերիկյան համալսարանի Քաղաքականության վերլուծության Թրփանճյան կենտրոնը (23-րդ տեղ) և «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, իսկ լավագույն բուհական կենտրոնների ցանկում՝ միայն «Ամբերդ» հետազոտական կենտրոնը:

Կենտրոնում հետևողական աշխատանքներ են իրականացվել գործունեության միջազգայնացման և միջազգային համագործակցության ընդլայնման ուղղությամբ: 2018 թվականին արտերկրի հետազոտական հաստատության հետ համագործակցելով կենտրոնը դիմել է ԵԱՏՄ տնտեսական հանձնաժողովի դրամաշնորհի 2 մրցույթի: Կենտրոնը բանակցություններ է վարել և համագործակցության եզրեր գտել Չինաստանի «Հասարակական գիտությունների ակադեմիայի համաշխարհային տնտեսագիտության և քաղաքագիտության ինստիտուտի» հետ:

Միաժամանակ, գիտական խորհուրդն արձանագրում է՝ դեռևս առկա են մի շարք խնդիրներ: Այսպես՝

- ծրագրային բյուջետավորման, հարկերի և տնտեսության առանձին ճյուղերի խնդիրներով մասնագիտացած փորձագետների շրջանակի ընդլայնման դանդաղ ընթացքը,
- ամբիոններ-կենտրոն արդյունավետ համագործակցության բացակայությունը և կենտրոնի հետազոտական նախագծերին ամբիոնների մասնակցության ցածր աստիճանը,
- արտաքին շահառուների հետ համագործակցության և արտերկրի գործընկերների շրջանակի ընդլայնման դանդաղ ընթացքը,
- հետազոտությունների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ոչ մեծ թիվը,
- իրականացված հետազոտությունների արդյունքների՝ օտար լեզվով հասանելիության ապահովման դանդաղ ընթացքը:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2018 թվականի գործունեության արդյունքները գնահատել բավարար**:

2. **Հանձնարարել «Ամբերդ» հետազոտական կենտրոնին՝**

1) դիտարկել կենտրոնի հետազոտական ծրագրերում ամբիոններից կատարող փորձագետների ներգրավման հնարավորությունները և մշակել կատարող փորձագետների ներգրավման համապատասխան կանոնակարգ՝ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից կենտրոնի հետ համագործակցող փորձագետների կայուն շրջանակի ձևավորման համար,
2) արտաքին կապերի դեպարտամենտի հետ համագործակցելով ակտիվորեն մասնակցել տեղական և արտերկրի դրամաշնորհային մրցույթներին,
3) արտաքին կապերի դեպարտամենտի հետ համագործակցելով փորձել մասնավոր հատվածից ներգրավել հետազոտական պատվերներ,
4) ընդլայնել արտերկրի հետազոտական կենտրոնների հետ համագործակցությունը, դրանց հետ համատեղ իրականացնել հետազոտություններ և հրապարակումներ, միասին մասնակցել տեղական ու միջազգային դրամաշնորհների մրցույթներին, ինչպես նաև իրականացնել համատեղ գիտական միջոցառումներ,
5) դիտարկել կենտրոնի գործող հետազոտական ծրագրերի և ներքին կառուցվածքի վերակազմակերպման նպատակահարմարությունը:

3. **2019 թ. առաջնահերթ խնդիրներ համարել՝**

1) արտերկրի առաջատար ուղեղային կենտրոններին առավել բնորոշ կազմակերպական կառուցվածքի ձևավորումը,
2) ամբիոններից կատարող փորձագետների ներգրավման և կենտրոնի հետ կայուն համագործակցող փորձագետների խմբի ձևավորման համար անհրաժեշտ կանոնակարգերի մշակումը,
3) կենտրոնի գործունեության ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցումը,
4) արտաքին դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերին կենտրոնի մասնակցության ընդլայնումը,
5) կենտրոնի գործընկերների շրջանակի ընդլայնումը:

4. **Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Տ.Ս.Մնացականյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Ա. Հայրապետյան**

2019 թ. ապրիլի 30
Երևան